




## ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԺԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀՈՒՆՉՔԸ

1977 Յունիս 18ին, Ալեքս եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի տարեւլերջի Հանդէսին, Ամեն. Պատրիարք Սըրբազան Հօր ձեռքէն իրենց վկայականները ստացան երկու շարք ընթացաւարտներ. — Ժառանգաւորաց Վարժարանի Հինգերորդ դասարանը աւարտող եօթը վկայականներ՝

Տիրացու Գրիգոր Կիւլէտերեան  
Տիրացու Եմովք Պաշալեան  
Տիրացու Խաչիկ Սիւլիւքեան  
Տիրացու Հրաչ Քէշիշեան  
Տիրացու Յակոբ Տէմիրեան  
Տիրացու Ներսէս Թաշեան  
Տիրացու Սարգիս Գրամեան

եւ Ընծայարանը աւարտող երեք ընծայացուններ, որոնք մի քանի օրեր առաջ մատուցած էին իրենց անդրանիկ պատարագը.

Հոգշ. Տ. Կովստաս Արդ. Շէրպէրեան  
Հոգշ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան  
Հոգշ. Տ. Եզնիկ Արդ. Պալեան

Այս տարուան Հանդէսին ամենէն սրտառուչ տեսարանը կը ներկայացնէին նորընծայ երեք արեղանները, որոնց գլխուն դրուած վեղարը չէր յաջողած ծածկել իրենց դէմքին թարմ պատանեկութիւնը: Անոնք նստած էին Միաբանութեան շարքի վերջաւորութեան եւ ուսանողական խումբին գլուխը: Թէեւ Միաբան, Հոգեղալուստի տօնին ընդունած Ս. Միւռնիկ օծումը իրենց ճակատին եւ ձեռքերուն եւ մատուցած իրենց անդրանիկ պատարագը, անոնք սակայն եկած էին ստանալու Ընծայարանի վկայականը պաշտօնական Հանդիսաւորութեամբ եւ լսելու իրենց ճշունակ բանքը Ալեքս եւ Մարի Մանուկեան Վարժարանին: Անոնք, Տեսչութեան աչքին, անդրանիկ պտուղներն էին տասը տարե-



ներ առաջ մշակուած ուսումնական ծրագրին, որ իր կատարումին կը հասնէր նորակառոյց չէնքին մէջ, աստուածային օրհնութեան մը ամբողջ դեղեցկութեամբ:

Տասը տարիներ առաջ վերակազմուեցաւ եւ հիմնապէս վերամշակուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ուսումնական ծրագիրը: Նպատակն էր Ժառանգաւորաց Վարժարանի բաժինը բարձրացնել երկրորդական վարժարանի մը մակարդակին, յատուկ զարկ տալով հայերէն լեզուի, տնտեսական եւ գրականութեան կողքին՝ անգլերէն լեզուին եւ գիտութեանց, պատրաստելով աշակերտները ըստ անգլիական ծրագրին, մասնակցելու համար General Certificate of Education-ի քննութիւններուն (University of London): Անհրաժեշտ նկատուեցաւ հինգ տարիներու ծրագրով մը, փոխանակ չորսի, իրականացնել սոյն նպատակը, բազմացնելով նաեւ դասապահերը, արդիականացնելով դասաւարտները եւ հրաւիրելով երիտասարդ ուսեմի՝ իրրեւ ուսուցիչ:

Այս տարի, առաջին անգամ ըլլալով իրականացաւ նաեւ հնգամեայ ուսումնական ծրագրի այս մասը եւ եօթը աշակերտներ ստացան իրենց վկայականները, անցնելէ ետք Ժառանգաւորաց Հինգերորդ դասարանի աւարտական քննութիւնները, ինչպէս նաեւ G.C.E.-ի քննութիւնները:



Նորընծաները Պատրիարքարանի դահլիճին մէջ, Ն. Ամեն Պատրիարք Ս.

Հօր եւ Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի հետ:

Ըստ նոր ծրագրին, Ընծայարանի բաժինն ալ երեք տարիներու իր աւանդական դասընթացքի դրութիւնը փոխեց եւ որդեգրեց չորս տարիներու ծրագիր մը, աստուածարանական եւ հայագիտական լուրջ պատրաստութիւն մը ապահովելու համար չրջանաւարտներուն:

Տասը տարիներու համբերութեան, տքնաջան աշխատանքի եւ յամառ յարատեւութեան առաջին պտուղն էին երեք նորընծայ արեղաները, որոնք իրենց վկայականները ստացան Ամեն. Պատրիարք Սրբազանէն:



Անցնող տասր տարիները եղան փոխանցման տարիներ, որոնց ընթացքին ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը շարունակեցին սովորական իրենց կեանքը եւ տուին մեր Ազգին եւ Եկեղեցիին՝ պատրաստուած ուսուցիչներ եւ հոյլ մը նուիրուած եկեղեցականներու, որոնք այժմ կը ծառայեն աշխարհի չորս ծագերուն ցրուած մեր եկեղեցիներուն մէջ, կամ կը շարունակեն իրենց ուսումը օտար համալսարաններէ ներս: Այս տարուան չրջանաւարտները առաջիններն են սակայն որոնք, եկած իբրեւ մանուկներ ինը կամ տասր տարիներ առաջ, լման եւ ամբողջական կերպով կ'աւարտեն ինը տարիներու դասընթացքը մեծ յաջողութեամբ:

Ժառանգաւորացի հին շէնքէն՝ Ալեքս եւ Մարի Մանուկեաններու եւ րախտաւոր անունը կրող նոր շէնք փոխադրութեան հետ, Հայ մասւորական, եւ եկեղեցական կեանքին համար պատրաստուող ուսանողութիւնը փոխադրուեցաւ նաեւ ուսումնական հին ծրագրէն նոր ծրագրին, որով նիւթական եւ կրթական նոր պայմաններու մէջ, անոնց միտքն ու հոգին կը ծագկին ու կ'ուսնան կազմելու համար եկեղեցական եւ ազգային դիտակցութիւն մը, որ ակնկալութիւնն է այսօրուան Հայութեան:

Այս առթիւ երախտագիտութեան եւ շնորհակալութեան յատուկ պարտք մը կը զգանք մեր մեծ ու փոքր բարերարներուն նկատմամբ, որոնք չբազմացան ու չեն զլանար բնաւ նիւթապէս օգնելու եւ բարոյապէս զօրամղիկ կանգնելու մեր գործին: Սրտի խոր կսկիծով կը յիշատակենք նորոգ վախճանեալ Հայկ Գալուստեանը, որ տարիներով եղաւ բարերարը տասը ուսանողներու եւ ուղեց միշտ իր անունը պահել մեր բարերարներու ցանկին գլուխը, մինչեւ վերջին օրը: Սուրբ ու աղօթք իր յիշատակին:

Յաւէտ երախտագարտ պիտի մնանք Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու Միութեան, որոնք ամէն տարի կը տքնին ու կը ջանան որպէսզի ապահովեն մեր պիւտճէն: Յատուկ զգացումով կը յիշատակենք մեծասիրտ Տատուր Տատուրեանը, ազնուասիրտ Սուրէն Ֆէստեանը, մեծ բարերար Տքթ. Վարդգէս Մկրտիչեանը, ազնուափայլ Տիկին Յիօրա Սարգիսեանը, բարեկամութեամբ զեղուն Տիգրան Կրէկըրին եւ բոլոր անձնաւորութիւններն ու հաստատութիւնները, որոնք տարիներէ ի վեր կը հովանաւորեն մեր Դպրեմանքը:

Երախտագիտութեան պարտք ունինք Տքթ. Բերկրուհի Սիւսեանի եւ Տքթ. Վազգէն Բարսեղեանի հանդէպ, որոնք տասը տարիներ առաջ մինչեւ Երուսաղէմ եկան, իրենց կրթական մեծ փորձառութենէն բաժին հանելու համար ուսումնական վերամշակուած ծրագրի պատրաստութեան եւ ամբողջացման եւ մօտէն հետեւեցան անոր զարգացման եւ զործադրումին:

Անհուն շնորհակալութեան մեր վերջին բայց ոչ վերջնական խօսքը կ'երթայ Վսեմաշուք Տիար Ալեքս եւ Տիկին Մարի Մանուկեան բարերարներուն, որոնք իշխանական նուիրատուութիւններով եւ բարձր հովանաւորութեամբ կարելի ըրին վերածնունդը ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին:

Անցնող տասր տարիներուն, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը քսանհինգ հոգեւորականներ արամազրեց Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու, Եւրոպայի, Ասիայի եւ Աւստրալիայի թեմերուն: Կը հաւատանք թէ նոյն թափով պիտի շարունակուի ճաճանչումը Ալեքս եւ Մարի Մանուկեան Ընծայարանին, եւ իրենց կոչումին համար պատրաստուած մշակներ պիտի երթան Երուսաղէմէն տանելու համար Սփիւռքի Հայութեան հոգեւոր եւ մասւոր հովուութեան իրենց ծառայութիւնը:

ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ  
Վերաւտեսչ